ւորութեան ծարաւ է, ջանք չի անում այն միակ բաղդաւորութիւնը ձեռք բերելու, որ կեանքի ոչ մի արկած չէ կարող իրանից խլել, այլ միայն աւելացնել ու ազնուացնել։»

Իսկ թարգմանիչն աւելացնում է. «Նուաստութեանս թարգմանած քրիստոնէական բարեպաշտութեան վերաբերեալ մեծապէս հրահանգիչ խորհրդածութիւններն ամենայն յարգանօք յիշելի Գերմանացի Զոկկէ անուն աստուածասէր և մարդասէր հեղինակի վեց հատոր գրուածներից՝ արժանի են ամենայն ուշադրութեան ամենայն քրիստոնեայ ազգաց և մանաւանդ մեր ազնէից, որովհետև իւր հեղինակութեանց մէջ շատ և շատ մութ մնացած տեղերն կրօնի և հաւատալեաց, այն է՝ աստուածութեան, քրիստոնէական ճշմարտութեանց, առաքինութեան, և բարի գործոց, իմաստնաբար ու գեղեցիկ կերպով բացատրել է նա քրիստոնեայ հոգիների և սրտերի համար։ Դորա մեծախոհ և բազմանշան գրուածները, թէև Գերմանացւոց համար են, բայց ոչ աննշան կշիռ ունին նաև ամենայն քրիստոնեայ ազգաց՝ և առաւելապէս՝ ազգիս համար, որոնք ծարաւի են՝ իբրև կենդանի ջրոյ՝ ամենակարևոր, պարզ, յստակ և դիւրըմբռնելի տեղեկութեանց՝ վերաբերեալ Աստուծոյ, աշխարհիս Փրկչի, իւր վարդապետութեամբն վերանորոգած մարդուն, նոր կեանքին և ամենայն գործոցն այս աշխարհիս մէջ։»

Գիրքը նուիրուած է Նորին Վեհափառութեան անուան։ Բայց ունինք որ նոյն իսկ նոքա, որոնք չեն սիրում կրօնական բովանդակութեամբ գրքերի ընթերցանութիւնը, մի անգամ համն առնելուց յետոյ, ծայրէծայր և ամենայն բաւականութեամբ պիտի կարդան Սրբազան Գրիգոր Եպիսկոպոս Աղավիրեանի այս հատորը։

Հայուհեաց ընկերութեան Վարչութիւնը խնդրում է հրատարակել հետևեալը.

ՀԱՇԻՒ ԵԼԵՒՄՏԻՑ

Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան Թիֆլիզում՝ սկսեալ Մարտի 1ից 1887 թ. ցՆ Մարտի 1888 թ.

ՄՈՒՏՔ.

Նախկին տարուայ մնացորդը՝

1. Տոկոսաբեր արժէքներ իսկական գնով 7600, որ գը-նուած է	6768	84
2. Ընթացիկ հաշիւ Թիֆլիզի Առևտրական բանկում	3720	45
3. Առձեռն դրամ	28	31
Գումար	10517	60

Այն տարուայ մուտքը՝

1. Նուիրաբերութիւններ.		
Պ. Կոստանդին Ալիխանեանից	300	
Պ. Գէորգ Եւանգուլեանից	100	
Անյայտ անձինքներից	73	92
2. 170 իսկական անդամներից	1020	
3 մշտական անդամից	300	
3. Պարահանդէսից վիճակախաղով	993	50
Ներկայացումից	720	
4. Տոկոսիք ընթացիկ հաշուի	60	12
» կտրոններից	370	96
5. Արդիւնք Ս. Նշան դպրոցի՝		
Աշակերտուհիների ձեռագործի վաճառումից	70	50
Ներսիսեան Հոգևոր դպրոցի Հոգաբարձութիւնից՝		
Էֆէնտեանի կտակաւանդ գումարից	30	59
Աշակերտուհիներից՝ ուսումնական պիտոյից համար վճար	18	
Գումար մուտքի	4057	59
Բոլորն իմիասին	14575	19

ԵԼՔ.

1. Դիւանական և մանր ծախսեր	49	15
2. Նուիրատուութիւններ՝		
Ցօգուտ մի երիտասարդի ուսման վարձ	10	
» մի օրիորդի	26	
» Զէյթունի հրկիզելոց	100	
» Ծղնէթ գիւղի ծխական դպրոցին	100	
Զրօրհնէքին և Զատկին բաժանուեցաւ շքաւորներին	204	
Տուած է մասնաւոր անձանց օժանդակութիւն	28	
3. Ս. Նշան Եկեղեց. ծխական դպրոցի պահպանութեանը	2161	40

Սոյն դպրոցի շինութեան կարկատանք և կրակից ապահովութիւնը	353	63
Գումար ծախուց	3031	18
Ընկերութիւնն ունի՝		
1. Ցոկոսաբեր արժէքոմներ իսկական գնով 9600 ռ. որ գնուած է	8768	84
2. Ընթացիկ հաշիւ Թիֆլիզի Առևտրական բանկում .	2700	53
3. Առձեռն դրամ	74	64
Գումար	11554	01
Բոլորն ի միասին	14575	19

Բացի սորանից ունի երեք հատ օսմանեան արծաթեայ դրամ և դպրոցական կահկարասիք և այլ իրեղէններ.

ՊԱՏՏՈՆԱԿԱՆՔ

ՔԱՂՈՒԱԾՔ

Աղգիս Վեհափառ Հայրապետը՝ Մարտի 23ին № 121 հաստատեց իւր սրբատառ Կոնդակաւն՝ Պատուելիք՝ Մկրտիչ Տէր Սիմէօնեանցին, Մահտեսի Յարութիւն Եաղանեանցին և Մկրտիչ Քիւրքճեանցին Արդուին քաղաքի Հայոց Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ եկեղեցական - ծխական միդասեան «Վարդանեան» տղայոց ուսումնարանի հոգաբարձական պաշտօնի մէջ։

—

Աղգիս Վեհափառ Հայրապետը Մարտի 23ին № 122 հաստատեց իւր սրբատառ Կոնդակաւն բարեկրօն Մարկոս քահանայ Մահտեսի Գէորգեանին և պատուելիք՝ երեցփոխան Արսէն Եզնակեանցին և Տօլուխան Մնացականեան Սարգսեանցին Դաւալու գիւղի եկեղեցական - ծխական միդասեան տղայոց ուսումնարանի հոգաբարձական պաշտօնի մէջ։

—

Աղգիս Վեհափառ Հայրապետը Մարտի 23ին № 123՝ հաստատեց իւր սրբատառ Կոնդակաւն բարեկրօն Գրիգոր քահանայ Զաքարեանցին և պատուելիք՝ Աստուածատուր Իսահակեանցին և Յարութիւն Բայաթեանցին Ներքին - Սարիղամիշ գիւղի եկեղեցական - ծխական միդասեան տղայոց ուսումնարանի հոգաբարձական պաշտօնի մէջ։